«Երեխաների քաղաքը»

Ստեղծարար սոցիալ-կրթական համալիր

Ծրագրի ընդհանուր նկարագրություն

Հայկական Կարիտասի «Երեխաների քաղաքը» ծրագրի մշակման և իրականացման նպատակն է Հայաստանում ստեղծել լայն հնարավորություն՝ երեխաների որակյալ կրթության, լիակատար ինքնազարգացման և ինքնադրսևորման, ավելի լավ ներկա և ապագա ունենալու համար: Ծրագիրն իր բնույթով նախևառաջ կրթական է՝ երեխաներին ընձեռելով լայն հնարավորություններ՝ զարգացնելու և դրսևորելու ստեղծարար ունակություններ՝ ոչ միայն գիտելիքներն ու կարողությունները տեղում կիրառելու, այլև, որպես սոցիալական բաղադրիչ, ինքնակազմակերպվելու, ինքնակառավարվելու, աշխատելու, տնտեսություն վարելու, հասարակության մեջ արդյունավետ ինտեգրվելու և կայանալու որպես լիարժեք անդամներ և առաջնորդներ:

Ծրագրի անվանումը՝ «Երեխաների քաղաքը», խորհրդանշական է՝ յուրահատուկ ձևով արտահայտելու համար երեխայակենտրոն համայնքներ զարգացնելու տեսլականը, որն ունի Հայկական Կարիտասը և որը համահունչ է նաև UNICEF-ի «Երեխայակենտրոն քաղաքների» նախաձեռնությանը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2019թ. ծրագրի առաջնահերթություններին և սկզբունքներին: Այլ խոսքով, Հայկական Կարիտասը, հավատարիմ իր համընդհանուր ներառման և արդյունավետ ինտեգրման ռազմավարությանը, մտադիր է ոչ թե ստեղծել առանձին քաղաք՝ վարչական միավոր, կամ առանձնացված բնակավայր՝ հասարակության մի որոշակի խմբի համար, այլ ստեղծել կրթական, զարգացողական կենտրոնների և հարմարությունների մի համալիր, որտեղ գործառնական գերագույն առաջնորդող սկզբունքը կլինի «երեխայի լավագույն շահը», համաձայն Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի (Հոդվ. 3, 1989թ.): Հետևաբար, «Երեխաների քաղաքը» խորհրդանշական անվանումն ընտրվել է՝ ընդգծելու համար, որ այս ծրագրում ամենակարևորը երեխայի լավագույն շահն է, որն, իհարկե, չի կարող ենթադրել երեխայի առանձնացումը, այլ՝ ճիշտ հակառակը՝ երեխային լիարժեք ինտեգրման և ինքնադրսևորման հնարավորություններ ընձեռելը: Ըստ այդմ, որպես ծրագրի իրականացման վայր, ընտրվել են Արարատի մարզի Շահումյան և Տափերական բնակավայրերի կառուցապատման համար նախատեսված տարածքները, որոնք այժմ փաստացի կառուցապատված չեն և, իրար միանալով, ընդգրկում են երկու բնակավայրերի միջև ընկած տարածքը: Ընդ որում, նախատեսված կառուցապատումը լինելու է Շահումյանի տարածքում՝ շարունակելով նույն բնակավայրի հասցեավորումը և շարունակությունը: Ծրագրով նախատեսված կրթական համալիրն, այսպիսով, կլինի նաև մի խորհրդանշական միավորող կամուրջ՝ երկու բնակավայրերի

միջև, համահունչ ծրագրի տրամաբանությանը, որն է՝ հանդիսանալ կամուրջ՝ ծրագրի շահառուներին հասարակության մեջ լիարժեք ինտեգրման համար: «Երեխաների քաղաքը» անվանումը խորհրդանշաբար արտահայտում է կրթական և սոցիալականացման նս մեկ սկզբունք՝ երեխաներին հնարավորություն տալ մասնակցելու իրենց կրթական համալիրի կազմակերպման և կառավարման բոլոր փուլերին և ոլորտներին և, ըստ այդմ, առավելագույնս զարգացնել սեփական ստեղծարար կարողությունները, ինքնակառավարման ունակությունը, անհատական և միասնական պատասխանատվության զգացումը, բարձրացնել ինքնագնահատականը՝ դառնալով դրական փոփոխությունների առաջամարտիկներ:

Ծրագրի անմիջական շահառուներն են լինելու 15-18 տարեկան շուրջ 600 երեխաներ, իսկ միջնորդավորված շահառուներ կարող են լինել մոտ 8000 բնակիչներ, ովքեր ապրում են հարակից բնակավայրերում, ինչպես նաև ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունը, ՀՀ Տնտեսական զարգացման նախարարությունները:

Ընտրության չափորոշիչները կմշակվեն՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի, Կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունների, ոլորտների տեղական և միջազգային մասնագետների, հասարակական սեկտորի ներկայացուցիչների հետ միասնական քննարկումների, երեխաների շրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում:

Ծրագիրն իրականացվելու է համաձայն «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ռազմավարության և տեսլականի, ՀՀ Կառավարության կողմից 2019թ. ծրագրի առաջնահերթությունների և սկզբունքների, ՀՀ օրենսդրության դրույթների (ՀՀ Օրենքը երեխայի իրավունքների մասին, ՀՀ Օրենքը հանրակրթության մասին, ՀՀ Օրենքը կրթության մասին, ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ Օրենքը զբաղվածության մասին, ՀՀ Օրենքը սոցիալական ծառայության մասին, ՀՀ Օրենքը Առողջապահության մասին և այլն), ՀՀ կառավարության որոշումների, միջազգային կոնվենցիաների և հռչակագրերի (Երեխայի իրավունքների հռչակագիրը (1959), Երեխայի իրավունքների կոնվենցիան (1989), Նվազագույն տարիքի մասին կոնվենցիան (1973), Երեխայի աշխատանքի վատագույն տեսակների մասին կոնվենցիան (1999), և այլն), UNICEF-ի «Երեխայակենտրոն քաղաքների» ուղենշային սկզբունքների, նմանատիպ ծրագրերի միջազգային փորձառության մանրակրկիտ ուսումնասիրության (օրինակ՝ Իտալիայում գտնվող «Երեխաների հանրապետությունը»):

Ծրագիրն ենթադրում է երեխաների համար ստեղծել պայմաններ և ընձեռել հնարավորություններ.

1. ստանալու որակյալ կրթություն՝ հանրակրթական դպրոցների առարկայական ծրագրերով և ստեղծարարական, ոչ պաշտոնական (non-formal) մեթոդաբանության զուգահեռ կիրառությամբ՝ օգտագործելով նմանատիպ ծրագրերի միջազգային փորձը և կրթության համընդհանուր չափանիշները,
2. տարատեսակ ենթածրագրերով զարգացնելու սեփական տաղանդները, հմտությունները, ստեղծարար, կառուցողական, հաղորդակցական և առաջնորդության հմտությունները,
3. հանդես գալու նորարարական գաղափարներով (բիզնես, գյուղատնտեսական, հասարակական, բնապահպանական, մշակութային, կրթական), որոնք հնարավոր կլինի կյանքի կոչել արդեն իսկ ուսման ընթացքում, դպրոցի և ընդհանուր ծրագրի շրջանակներում ընձեռնված լայն հնարավորությունների պայմաններում,
4. ստեղծելու և զարգացնելու իրենց սեփական անվտանգ, ապահով միջավայրը՝ ուղղակիորեն մասնակցելով համալիրի, կրթության, սոցիալական ծառայությունների և տնտեսության կառավարմանը,
5. դառնալ փոփոխության առաջամարտիկներ՝ սեփական և հասարակական կյանքում:

«Երեխաների քաղաքը» կրթական համալիրն իր բնույթով նման է լինելու քոլեջների կամպուսներին (campus): Կամպուսը ենթադրում է համալիր, որի մեջ մտնում է կրթական հաստատությունը՝ իր ածանցյալ բաղկացուցիչներով: Այս ծրագրի դեպքում դրանք լինելու են կրթական կենտրոնը կամ քոլեջը, կացարանները (dormitorium)՝ աշակերտների համար, գրադարանը, հանգստի, սպորտի վայրերը, աշխատակիցների համար նախատեսված ննջարանները, ստեղծարարական տարածքները, գյուղատնտեսական, տնտեսական, բիզնես ծրագրերի իրականացման տարածքները, համալիրի ընդհանուր կառավարման գրասենյակը, և այլն:

Ցանկության դեպքում երեխաներին ուսման ընթացքում կարող են միանալ նաև ծնողները և ընտանիքի մյուս անդամները, երբ ծրագրի շրջանակներում նրանց ժամանակավոր աշխատանքով ապահովելու (քույրերին և եղբայրներին՝ քոլեջում ընդգրկելու) հնարավորություններ ստեղծվեն: Նրանք կարող են ժամանակավորապես բնակվել այդ նպատակով համալիրի տարածքում կառուցվելիք տներում:

Կրթությունը

«Երեխաների քաղաքը» համալիրում կրթությունը կազմակերպվելու է այնպես, որ երեխաները ուսմանը զուգահեռ իրենք իրենց համար կարողանան ստեղծել սեփական աշխատանքի, զբաղմունքի, մասնագիտության իրատեսական և արդեն իսկ որոշակի փորձառությամբ նախազծված և մասնագիտական խորհրդատվության վրա հիմնված հեռանկարներ՝ հետագայում գործազրկության մեջ չհայտնվելու համար: Կրթական

համալիրը մասնակից երեխաներին և պատանիներին ոչ միայն կդարձնի մրցունակ՝ տեղական և միջազգային աշխատաշուկայում, այլև ունակ՝ աշխատատեղեր ստեղծելու ոչ միայն իրենց, այլև՝ իրենց համայնքների համար, ինչպես նաև հանդես գալու հասարակական, քաղաքացիական, հոգևոր, մշակութային նախաձեռնություններով, որոնք ևս համայնքային զարգացման կարևոր բաղադրիչներ են:

«Երեխաների քաղաքը» առաջարկելու է նաև անհատականացված կրթական ծրագրեր՝ կազմված երեխայի հիմնարար իրավունքների ամբողջական իրականացման սկզբունքով, երաշխավորելու է երեխայի առողջ աճի համար անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական ու կրթական միջամտությունները և խնամքը, աջակցելու է երեխայի սոցիալական ներգրավմանը: Այն նպաստելու է բարձրորակ դասավանդման և ուսուցման գործընթացներին՝ յուրաքանչյուր երեխայի զարգացման մակարդակին, ունակություններին համապատասխան՝ ակտիվ, ժողովրդավարական և համագործակցային ուսուցման մեթոդներով՝ ապահովելով երեխաներին կառուցվածքային բովանդակությամբ և բարձրորակ կրթական նյութերով և ռեսուրսներով:

Քոլեջից բացի քաղաքը ունենալու է նաև զարգացման սոցիալական կենտրոն, որն աջակցելու է երեխաների ուսումնառության գործընթացին, մասնագիտական և սոցիալական հմտությունների ձեռքբերմանը՝ կառուցելով դրական հարաբերություններ մեծահասակների աշխարհի հետ: Կենտրոնը երեխաների և, անհրաժեշտության դեպքում, նաև նրանց ընտանիքների համար տրամադրելու է ինտերակտիվ կրթական դասընթացներ՝ հագեցած գործնական վարժություններով և անմիջական փորձառությամբ՝ առաջարկելով ակտիվ ուսուցման անհրաժեշտ ռեսուրսներ, հնարավորություն ընձեռելով ձեռք բերված գիտելիքները կիրառել համապատասխան ոլորտում:

Համալիրի կրթական համակարգը նպաստելու է երեխաների ուսումնառության գործընթացների նպատակների և արդյունքների սահմանմանը, օգնելու է երեխաներին ընտրել, գտնել և սովորել այն, ինչ անհրաժեշտ է իրենց: Երեխայակենտրոն այս կրթական համալիր-«քաղաքը» խթան է հանդիսանալու երեխաների ակտիվ մասնակցության, ստեղծագործ մոտեցումների զարգացման և ինքնագնահատականի բարձրացման համար:

«Քաղաքի» կառավարումը երեխաների կողմից՝ որպես կրթության և սոցիալիզացիայի բաղադրիչ

«Երեխաների քաղաքը» երեխաների համար կլինի նախաձեռնողականության, թիմային աշխատանքի և առաջնորդության *դպրոց՝* ոչ միայն այդ կարողությունները դրսևորելու առանձին ծրագրերի, ինքնակազմակերպվող միությունների,

միջոցառումների միջոցով, այլն *անմիջականորեն մասնակցելով* համալիրի կառավարման ամբողջ համակարգի մշակման, զարգացման և իրականացման գործընթացին, այսինքն՝ զբաղեցնելով զանազան պաշտոններ, խորհրդակցական և (կամ) ձայնի իրավունքով մասնակցելով կարևորագույն որոշումների ընդունմանը՝ ծրագիրն իրականացնող մասնագետների թիմի հետ միասին: Քաղաքում ցանկացած որոշում պետք է կայացվի՝ հիմնվելով Երեխայի իրավունքների կոնվենցիայի վրա՝ առ այն, որ երեխաներին ուղղված ցանկացած գործողության գլխավոր նպատակը պետք է լինի երեխայի առավելագույն շահը: Քաղաքը անմիջականորեն կառավարելը որպես մարդ անհատ, հասարակաց բարիքին ծառայող քաղաքացի կայանալու լավագույն մի համակարգ է և, կարելի է ասել, կրթության ոչ ավանդական մի մոդել, որը նոր է ներդրվելու Հայաստանում:

Երեխաների կողմից կառավարումը ենթադրում է մասնակցել համալիրի կառավարմանը բոլոր ոլորտներում՝

-ծրագրի կառավարում և համակարգում,

-քաղաքի կառավարման խորհուրդ, վարչական բաժանմունքներ և այլ ենթակառուցվածքներ,

-քոլեջի ղեկավարում, կրթական ծրագրերի կազմում, միջոցառումների պլանավորում և անցկացում,

-արտադրական, գյուղատնտեսական ծրագրերի նախաձեռնում, այդ ծրագերի ֆոնդհայթայթում,

-վաճառատանը, ժամանցի վայրերում և համալիրի այլ ենթակառուցվածքներում:

Սոցիալական ծառայությունները

Պետք է սոցիալական բաղադրիչը հասանելի լինի շահառու բոլոր երեխաների համար տարբեր ձևափաչերով՝ ըստ երեխաների և ընտանիքների կարիքի՝ խմբային սոցիալական աշխատանք, անհատական սոցիալական աշխատանք, համայնքային սոցիալական աշխատանք, սոցիալական տարածքների բարելավում, համատեղ միջոցառումեր:

Սոցիալական պաշտպանության համակարգի զարգացման համատեքստում, այս ծրագիրն առաջարկում է արդյունավետ առավելությունների և գործիքների մի փաթեթ՝ նպաստելու համայնքային բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Նախատեսվում են հետևյալ սոցիալական միջամտությունները.

-սոցիալական աշխատողների և համապատասխան մասնագետների կողմից յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անհատական զարգացման ծրագիր՝ այն համաձայնեցնելով ընտանիքի անդամների հետ (այդ ծրագրերում կարտացոլվեն ընտանիքի յուրահատուկ կարիքները և հստակ քայլերը՝ նրանց խնդիրները լուծելու համար),

-երեխաների և նրանց ընտանիքի անդամների համար առաջարկվում է սոցիալ-մանկավարժական խորհրդատվություն՝ համաձայն նրանց անհատական զարգացման ծրագրերի և կարիքների,

-անհատական, խմբային և ընտանեկան խորհրդատվություն, թեմատիկ խմբային քննարկումներ՝ վարքային փոփոխությունների բերելու նպատակով,

-երեխաների և նրանց ընտանիքի անդամների համար անցկացվում են դասընթացներ և իրազեկման միջոցառումներ՝ խթանելու նրանց քաղաքացիական ակտիվությունը,

-երեխաների ծնողների համար անցկացվում են մասնագիտական պատրաստության դասընթացներ՝ ըստ նրանց կարիքների և զբաղվածության նախասիրությունների: Դասընթացների ավարտից հետո ծնողներին տրվում են հնարավորություններ՝ սկսելու արտադրական գործունեություն կամ մատուցելու ծառայություններ,

-ծնողավարման կարողությունների զարգացման դասընթացներ:

Խորհրդատվության, հմտությունների զարգացման, սոցիալական և հոգեբանական աշխատանքի տարբեր բաղադրիչների միջոցով ծրագրի շահառուները կկարողանան ճանաչել սեփական կարողություններն ու հնարավորությունները և դրսևորել դրանք: Այսպիսի համակողմանի աջակցության շնորհիվ շահառու երեխաների ծնողները կամ խնամակալները կկարողանան զարգացնել դրական ընտանեկան հարաբերություններ, հասկանալ և պատշաճ կերպով արձագանքել իրենց երեխաների կարիքներին և զինված կլինեն անհրաժեշտ հոգեբանական, սոցիալական և օրենսդրական գիտելիքներով՝ իրենց ընտանիքներին օգնելու և իրավունքները պաշտպանելու համար:

Երեխաները, ներգրավված լինելով հանդուրժողականության, ընկերության, հաղորդակցության և առաջնորդության հմտությունների զարգացման խմբային սոցիալ-հոգեբանական աշխատանքի մեջ, կամրապնդեն իրենց ինքնավստահությունը և կբարելավեն իրենց սոցիալական վարքը, ինչը կօգնի նրանց լինել հոգեբանորեն ավելի կայուն և տարեկիցների հետ զարգացնել լավ հարաբերություններ:

Բիզնես կարողությունների զարգացումը «Երեխաների քաղաքում»

«Երեխաների քաղաքում» կրթական գործընթացի կարևոր բաղադրիչներից մեկը պետք է լինի երեխաներին բիզնեսով, արտադրությամբ և, հատկապես, սոցիալական ձեռներեցությամբ զբաղվելու հմտություններ սովորեցնելը: Սոցիալական ձեռներեցությունը շատ կարևոր տնտեսական ոլորտ է, որը ակնհայտ է դարձնում, թե ինչպես կարող են նորարարությամբ, համընդհանուր բարիք ստեղծելու թիրախային նպատակով, միասնականությամբ նպաստել առանցքային սոցիալական խնդիրների լուծմանը և ձեռներեցության հմտությունների զարգացմանը:

Երեխաներին սովորեցնելով սոցիալական ձեռներեցության սկզբունքները և հմտությունները՝ ուսուցիչները կարող են օգնել նրանց լինել հենց այն փոփոխությունը, որոնք նրանք այդքան ցանկանում են տեսնել աշխարհում՝ միաժամանակ բացահայտելով սոցիալական ձեռնարկատիրության ոլորտում առկա մարտահրավերներն ու լավագույն փորձը:

Նորարության խթանումը սոցիալական ձեռներեցության կարևորագույն բաղադրիչն է: «Երեխաների քաղաքը» նպատակաուղղված կլինի ենթակառուցվածքներում նորարարական մոտեցումների զարգացմանը, ինչպիսիք են օրինակ՝ ջերմոցները, այգեգործությունը և ձեռքի աշխատանքների արտադրությունը:

Դասընթացի բովանդակությունը և կառուցվածքը առավելագույնս կհամապատասխանեցվեն երեխաների մոտ սոցիալական մտածելակերպի ձևավորմանը և նրանց ապագայի համար ծառայության սկզբունքով առաջնորդվող ղեկավարներ դառնալուն: Ավարտողները, որպես աշխատանքային կարիերայի ուղի, կարող են ընտրել աշխատանքը սոցիալական ձեռնարկությունում կամ հետագայում հիմնադրել իրենց սեփական սոցիալական ձեռնարկությունը:

«Երեխաների քաղաքում» կներդրվի սոցիալական ձեռնարկության հիմնադրման ծրագիր, որտեղ երեխաները կկարողանան աշխատել և գործնականում սովորել սոցիալական ձեռնարկատիրության սկզբունքները: Այդտեղ կկարողանան աշխատել նաև նրանց ծնողները:

«Երեխաների քաղաքը» համալիրը, ապագային ուղղված աշխարհայացքի միտումներով, նպատակադրված կլինի ունենալու.

-սմարթ կենտրոններ-մասնագիտական դասընթացներ և արտադրություն:

-նորարարական ինժեներիա-ռոբոտաշինություն, բիո-ինժեներիա, 3D մոդելավորում, դրոնների մոդելավորում, չիպերի նախագծում, վերականգնվող էներգիա, էներգաարդյունավետություն, վերամշակում և այլն,

-SS ոլորտի մասնագիտական վերապատրաստումներ, որոնք կստեղծեն աշխատատեղեր - մեդիա, վեբ, ծրագրավորում և այլն,

-սմարթ ջերմոցներ – էներգոարդյունավետություն կաթիլային ոռոգման և ցանցերի, ակունքների և այլնի հետ,

-խաղողի արտադրություն և գինեգործություն,

-հյուրանոցային և ռեստորանային ծառայություններ,

-ագրո և գաստրո-տուրիստական վայրեր զբոսաշրջիկների համար,

-սննդի վերամշակում-չրեր, խոտաբույսեր և այլն:

Դրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա շարունակական, ինտենսիվ կապ համալիրի կառավարման գրասենյակի կրթության, շուկայի հետազոտությունների բաժինների հետ՝ իրական կարիքները բացահայտելու և զարգացման միտումները գնահատելու համար:

Երեխաների քաղաքը կհանդիսանա տարածք և վայր (ըստ աշխարհագրական և սոցիալական ընկալման), որտեղ երեխաներին կընձեռնվեն հնարավորություններ՝ իրենց ամենաանհավանական թվացող երազանքների իրականացման համար, ինչպես նաև հնարավորություն կունենան իրենց մեջ զարգացնելու նախապայմաններ՝ սեփական երազանքներին հասնելու համար՝ այն համայնքներում, որտեղից եկել են, կամ որտեղ նրանք ապրելու են ապագայում: